

ՋՈՒՂԱՅԵՑԻ ԽՕՋԱՅ ՍԱՖԱՐ ՈՒ ԽՕՋԱՅ ՆԱԶԱՐ

ԵՒ ԻՐԵՆՑ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Տարիներ առաջ, «Հայրենիք» ամսագրի թիւերուն մէջ, յետոյ առանձին ալ արտատպումով, հրատարակեցի «Ջուղայեցի Խօջայ Նազար եւ իր գերդաստանը» խորագրեալ մենագրութիւն մը¹: Անկէ ի վեր նորանոր նիւթերու յայտնութիւնը կը ստիպէ զիս վերստին գրել, այս անգամ աւելի ամբողջական բովանդակութեամբ, Ջուղայեցի այս պատուական ու հին տոհմին մասին:

Առաքել Դաւրիթեցի կը պատմէ որ Շահ Աբաս Մեծ, Դաւրէժը Օսմանցիներէն գրաւելէ ետք՝ Երեւանի վրայ կը յարձակի, ու ճանապարհին կը հանդիպի Հին Ջուղայ: Դաւրիթեցի թուական չի տար, սակայն այլուստ գիտենք՝ թէ Շահ Աբաս Դաւրէժը գրաւեց 21 Հոկտ. 1603ին, որով Հին Ջուղայ հանդիպած պէտք է ըլլայ նոյն տարուան Հոկտեմբերին վերջը կամ Նոյեմբերի սկիզբները:

Դաւրիթեցի կենդանի ոճով կը նկարագրէ Շահ Աբասի Հին Ջուղա հանդիպիլը եւ հոն ընդունուիլը: Շահն ու արքունի հետեւորդները, կ'ըսէ, «յորժամ հասին ի դիւղաքաղաքն Ջուղայ, ամենայն բնակիչքն Ջուղայու բազում եւ զանազան եւ պէսպէս յօրինուածովք պատրաստութիւնս հոգացեալ՝ ելին ընդ առաջ Շահին, որպէս վայել է թագաւորի: Իշխանք եւ ծերք եւ երիտասարդք՝ ի զարդ եւ ի զէնս ոսկէհուռն սխրատեսիլ հանդերձից պճնազարդեալք ընդ առաջ ընթանային: Եւ նորարողքով դեռահաս մանկունք՝ ոսկի բաժակաւ զանուշահամ եւ ազնիւ գինի մատուցանէին: Լուցեալ մոմեղինօք եւ խնկօք եւ կնդրկօք քահանայք եւ մարմնաւոր երգեցիկք առաջի ընթանալով յարմարական ձայնիւ նուագէին: Եւ զճանապարհս անցից արքայի զարդարեցին. եւ յեզերէ գետոյն մինչեւ ցապարանս Խօջայ Խաչիկին արկին փայանդազ (ծանրագին դիպակ՝ թաղաւորի ընդունելութեան ատեն անոր ոտքերուն տակ փռուած – Յ. Բ.) առաթուր

1. Հմմտ. «Հայրենիք» ամսաթերթ (Պոսթըն), ԻԱ. տարի (1943) թ. 4 (Յուլիս-Օգոստ.) էջ 72-82, թ. 5 (Սպտ.-Հոկտ.) էջ 63-73, թ. 6 (Նոյ.-Դեկտ.) էջ 69-87: